ԼՕՆԻ Շրջանային Վարչութիւնը իր հաւատարիմ անդամուկներու անսակարկ աշխատանքին յենելով կազմակերպուեցաւ, զօրացաւ ու ծրագրեց իր գործունէութեան ծիրը: Իր ծառայութիւնը շարունակուեցաւ ապագայի նուաճումներու հեռանկարով՝ վճարելով աւելի մօտէն քայլ պահել քաներորդ դարու վերջին տարիներուն գիտական, ընկերային, մշակութային, առողջապահական եւ տնտեսական մարզերուն հետ:

Այս եթեանասուն երկար տարիներու վաստակով ԼՕՆԻ փաստեց, թէ կրնայ յաղթել ամենազոճուար կացութեան անգամ, իր ողջմիտ ողորդմանով:

ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Կրօնը, ինչպես եւ եկեղեցին, դարեր, իսկ հնագույն ժողովուրդները համար հազարամեակներ շարունակ մշտապես տիրապետող դիրք են ունեցել բոլոր ժողովուրդները հասարակական կեանքում, մեծապես նկատելի են հասարակական յարաբերությունները կարգաւորմանը եւ վճռորոշ դերակատարութիւն են ունեցել ինչպէս պետութիւնները ներքին կեանքում, այնպէս էլ արտաքին յարաբերությունները ոլորտում: Եւ չնայած ապակրօնականացման աւելի քան երկուհարիւրամեայ ընթացքին, այսօր էլ կրօնը բոլոր պետութիւններում շարունակում է կատարել իր աշխարհահայեացքային, կարգաւորող, միասնականացնող գործառնութիւնը, մեծ դեր խաղալ հասարակական յարաբերությունները ոլորտում, նկատում է ազգային արժէքները պահպանմանը, մարդկանց բարոյական նկարագրի ձեւաւորմանը: Եւ այս պատճառով է, որ բոլոր պետութիւններն էլ մեծ ուշադրութիւն են դարձնում եկեղեցու հետ յարաբերությունները ինչպէս որ ազգայնացմանը, որպէս կանոն, այդ յարաբերությունները կարգաւորում են հիմնականում եւ առաջին հերթին ամենաբարձր սահմանադրական, մակարդակով:

Պետութեան եւ եկեղեցու փոխյարաբերություններն արտայայտելու համար օգտագործելու է «աշխարհիկ պետութիւն» հասկացու-

թիւնը, որը նշանակում է, որ պետութիւնը եւ եկեղեցին անջատուած են միմեանցից եւ հետեւաբար ճարտար իրաւունքները չի կարող միջամտել միւսի գործունեութեանը, իսկ պետութիւնը պարտաւոր է բոլոր կրօնական ուսմունքները եւ կրօնական կազմակերպութիւնները համար, սովորաբար օրէնքով սահմանաւոր կարգով, ապահովել հասարակ պայմաններ: Ներկայումս աշխարհի բազմաթիւ պետութիւնները սահմանադրութիւններում ամրագրուած է պետութեան աշխարհիկութիւնը կամ (եւ) պետութեան անջատուած լինելը եկեղեցուց (Ֆրանսա, Ռուսաստան, միջինասիական հանրապետութիւններ, Ազրայէյնան, Ալյանիա եւ այլն):

Ձեռքով պետութեան եկեղեցուց անջատման գործընթացն ունի աւելի քան երկու հարիւրամեայ պատմութիւն (սկսած ֆրանսական մեծ յե-

ղափոխութեան ժամանակաշրջանից), եւ շատ պետութիւններ արդէն աշխարհիկ են, այնուամենայնիւ այսօր էլ բազմաթիւ պետութիւններում, այդ բուն ժողովրդավարական պետութիւններում, սահմանադրութիւնները մակարդակով ամրագրուած է այդ պետութիւնների ոչ աշխարհիկ լինելը, այսինքն այդ պետութիւններում գործում է պետական (ազգային) կամ պաշտօնական (եթեմն օգտագործում է նաեւ «տիրապետող կրօն» հասկացութիւնը) եկեղեցու հիմնարկը, ինչը ենթադրում է, որ այդ պետութիւններում որոշակի եկեղեցի (համապատասխան կրօնական ուսմունք) ունի յատուկ կարգավիճակ, եւ պետութիւնը տարբեր չափերով հովանաւորում ու շնորհակցում է այդ կրօնական կազմակերպութիւններին:

Հակառակ է, որ եկեղեցու (կրօնի) նկատմամբ այսպիսի պետական վերաբերմունքն առաջին հերթին յատուկ է բացարձակ եւ սահմանադրական միապետութիւններին, որոնց պետութեան գլուխը, որպէս կանոն, միաժամանակ նաեւ եկեղեցու գլուխն է: Սակայն եկեղեցու (կրօնի) նկատմամբ նման դիրքորոշումը յատուկ է ոչ միայն միապետութիւններին, այլեւ հանրապետական կառավարում ունեցող պետութիւններին, որոնցում որոշակի եկեղեցի ունի պետական, պաշտօնական կարգավիճակ կամ որոշակի կրօն համարում է տիրապետող (Իսրայէլում, Յունաստան, Իսրայէլ, Իրանում, Հարաւմերիկեան հանրապետութիւնները գերակշիռ մասը եւ այլն): Պետութեան եւ տարբեր եկեղեցիների միջեւ յարաբերությունները կարգաւորման ուղղուած է նախատեսուած Լեհաստանի սահմանադրութիւնում: Ցատուկ ձեւ է մշակուել կաթոլիկ եկեղեցու հետ փոխյարաբերություններում: «Լեհական Հանրապետութեան եւ Կաթոլիկ եկեղեցու միջեւ յարաբերությունները որոշում են Առաքելական Մայրաքաղաքի հետ կնքուած միջազգային պայմանագրով եւ օրէնքներով» (յօդուած 25.4), իսկ վերջինների հետ յարաբերությունները որոշում են այնպիսի օրէնքներով, որոնք ընդունում են կառավարութեան եւ այդ եկեղեցիների ներկայացուցիչների հետ կնքուած պայմանագրի հիման վրայ (յօդուած 25.5): Պետութեան եւ եկեղեցու յարաբերությունների կարգաւորումը հետաքրքրական լուծում է ստացել Իտալիայի սահմանադրութիւնում: «... Յարաբերությունները կարգաւորում են Լատինական հիմնականագրով» (յօդ. 7), ընդ որում այդ հիմնականագրերի փոփոխությունները «... չեն պահանջում սահմանադրութեան վերանայման որեւէ ընթացակարգ» (յօդ. 7): Այսինքն՝ սահմանադրութեամբ ամրագրուել են աւելի վաղ կնքուած Լատինական հիմնականագրերի դրոյթները, եւ պետութիւնը փաստօրէն սահմանադրութիւնից անկախ կարող է ինքնուրույնաբար կարգաւորել պետութեան եւ կաթոլիկ եկեղեցու միջեւ յարաբերությունները: Ճշգրիտ լինելու նկատակով նշենք, որ Լատինական հիմնականագրերի հիմնական պայմանագրով կաթոլիկութիւնը ճանաչուել է Իտալիայի միակ պետական կրօնը, եւ դրա հիման վրայ ստեղծուել է Վատիկան պետութիւնը, իսկ միւս պայմանագրով՝ Քրիստոսաբով որոշուել են կաթոլիկ եկեղեցու իրաւունքներն ու արտօնությունները Իտալիայում:

Անհրաժեշտ է նկատել, որ թեւ տարբեր պետութիւններում պետութեան եւ եկեղեցու յարաբերությունները կարգաւորում են ամենատարբեր մեթոդներով, այնուամենայնիւ շատ պետութիւններում, յատկապես ժողովրդավարական պետութիւններում, կայ մի ընդհանրական մտտեցում, որպէս իրաւունք, պետական կարգաւորումը պետութեան հետ կնքուած պայմանագրով է ինչպէս, դաւանանքի ազատութիւնը: Ընդհանուր առմամբ ժողովրդավարական պետութիւնները սահմանադրութիւններով գերակշիռ մասը հռչակելով ցանկացած կրօն դաւանելու, կրօնական համայնքներում միաւորութեամբ մարդկանց միաւորելու իրաւունքները, միաժամանակ ամրագրում է, որ այդ իրաւունքների իրագործումը պետք է վստահելի պետական անվտանգութիւնը, ինչպէս եւ կրօնական հիմնականները չեն կարող լինել սահմանադրական ու քաղաքացիական պարտականութիւններից հրաժարուելու հիմք:

Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, արդի աշխարհում պետութիւնների մեծամասնութիւնը, այդ բուն ժողովրդավարական պետութիւնները, չափազանց կարեւորում է պետութեան եւ եկեղեցու (կրօնի) յարաբերությունների կարգաւորումը, եւ դա առաջին հերթին կատարում է պետութեան հիմնական օրէնքի մակարդակով:

Հարկ ենք համարում նշել նաեւ, որ մարդու իրաւունքները ու ազատութիւնները արդի ըրբժամանակ, ինչպէս են գտնաբարասական բազմակարծութեան տեսանկիւնից դիտարկելով իրենց եւ դաւանանքի ազատութիւնը խիստ

ձեւական չափանիշների առումով, կարելի է ենթադրել բոլոր կրօնական ուսմունքների իրաւահասարակութեան անհրաժեշտութիւնը: Սակայն իրականում, ինչպէս արդէն գիտենք, այդպիսի բացարձակ իրաւահասարակութիւն գոյութիւն չունի եւ իւրաքանչիւր պետութիւնում որեւէ եկեղեցի (եւ նրա կրօնական վարդապետութիւնը) ունի յատուկ կարգավիճակ: Այդպիսի վերաբերմունքը, ի հարկէ, պատահական չէ, ոչ էլ կամայականութեան դրսեւորում, այլ ժողովուրդների, հասարակութեան ու պետութեան կեանքում կրօնի ունեցած դերի կարեւորութեան արտայայտում է:

Համեմատաբար մանրամասն ներկայացնելով պետութեան եւ եկեղեցու (կրօնի) փոխյարաբերությունները սահմանադրական կարգաւորման առկա տարբերակները համայնապատկերը, բնականաբար հարց է առաջանում, թէ ինչպէս են կարգաւորում համայնական յարաբերությունները Հայաստանի Հանրապետութիւնում եւ առաջին հերթին, ի հարկէ, Հայաստանի սահմանադրութիւնը ինչպիսի վերաբերմունք է գրեւորում Հայաստանեայց Առաքելական եկեղեցու եւ նրա վարդապետութեան նկատմամբ:

Այս առումով նշենք, որ Հայաստանի սահմանադրութիւնում հայ եկեղեցին եւ նրա վարդապետութիւնը որեւէ ձեւով չի յիշատակում եւ, հետեւաբար, որեւէ վերաբերմունք չի ցուցաբերում: Ի հարկէ, Հայաստանի սահմանադրութիւնը որքանով կառուցուած է ընդհանուր ժողովրդավարական սկզբունքներ հիման վրայ եւ մարտու իրաւունքների ու ազատութիւնների պաշտպանութեան դիրքերից, նրանում ամրագրուած է նաեւ իրենց եւ դաւանանքի ազատութեան իրաւունքը, եւ այդ իրաւունքը կարող է սահմանափակուել միայն օրէնքով (յօդ. 23):

Իստեղծով Հայաստանի սահմանադրութեան այսպիսի դիրքորոշումից եւ հետեւաբար այն հանգամանքից, որ պետութիւնը որեւէ եկեղեցու նկատմամբ որեւէ պարտաւորութիւն չի ստանձնում, ապա կարծում ենք միանշանակ կարելի է եղբայրացնել, որ Հայաստանի Հանրապետութիւնը աշխարհիկ պետութիւն է:

Պետութեան ժողովրդավարութիւնը եւ աշխարհիկութիւնը, ինչպէս տեսնք տարբեր պետութիւնների համայնապատկերում, ամենեւեւ չի նշանակում եկեղեցու նկատմամբ որեւէ վերաբերմունքի բացակայութիւն, այլ, ընդհանրապէս, ակնյայտ դրսեւորում է եկեղեցու կարեւորութիւնը, անհրաժեշտութիւնը տեսնելով կրօնական գոյութեան կարեւորութիւնը հասարակական յարաբերությունները կանոնակարգելու, մարդկանց հոգեւոր կարիքները բավարարելու, ազգային արժէքները պահպանելու եւ զարգացնելու հարցում: Ինչպէս եւ հասարակութեան մէջ բարոյականութեան, բարեսեացականութեան, բարու, յոյսի, հեւատի ու սիրտը կայուն ու առողջ մթնոլորտ ստեղծելու գործում: Ուստի նկատի ունենալով Հայաստանի եւ եկեղեցու միջեւ յարաբերությունները, որ Լատինական հիմնականագրերի հիմնական պայմանագրով կաթոլիկութիւնը ճանաչուել է Իտալիայի միակ պետական կրօնը, եւ դրա հիման վրայ ստեղծուել է Վատիկան պետութիւնը, իսկ միւս պայմանագրով՝ Քրիստոսաբով որոշուել են կաթոլիկ եկեղեցու իրաւունքներն ու արտօնությունները Իտալիայում:

Անհրաժեշտ է նկատել, որ թեւ տարբեր պետութիւններում պետութեան եւ եկեղեցու յարաբերությունները կարգաւորում են ամենատարբեր մեթոդներով, այնուամենայնիւ շատ պետութիւններում, յատկապես ժողովրդավարական պետութիւններում, կայ մի ընդհանրական մտտեցում, որպէս իրաւունք, պետական կարգաւորումը պետութեան հետ կնքուած պայմանագրով է ինչպէս, դաւանանքի ազատութիւնը: Ընդհանուր առմամբ ժողովրդավարական պետութիւնները սահմանադրութիւններով գերակշիռ մասը հռչակելով ցանկացած կրօն դաւանելու, կրօնական համայնքներում միաւորութեամբ մարդկանց միաւորելու իրաւունքները, միաժամանակ ամրագրում է, որ այդ իրաւունքների իրագործումը պետք է վստահելի պետական անվտանգութիւնը, ինչպէս եւ կրօնական հիմնականները չեն կարող լինել սահմանադրական ու քաղաքացիական պարտականութիւններից հրաժարուելու հիմք:

Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, արդի աշխարհում պետութիւնների մեծամասնութիւնը, այդ բուն ժողովրդավարական պետութիւնները, չափազանց կարեւորում է պետութեան եւ եկեղեցու (կրօնի) յարաբերությունների կարգաւորումը, եւ դա առաջին հերթին կատարում է պետութեան հիմնական օրէնքի մակարդակով:

Հարկ ենք համարում նշել նաեւ, որ մարդու իրաւունքները ու ազատութիւնները արդի ըրբժամանակ, ինչպէս են գտնաբարասական բազմակարծութեան տեսանկիւնից դիտարկելով իրենց եւ դաւանանքի ազատութիւնը խիստ

ԱԶՐՊԵՅՃԱՆ - ԲԱՏՐԵՐ

ՎԱԶՔՔ՝ ԱՌԱՋԱՍԱՐԻ ԵՏԵՒԻՑ

Ո՞Վ Ե ԅԱՒԱԿՆՈՒՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆԸ

Ստորեւ տրուած յօդուածը կը վերլուծէ 2003ին տեղի ունեցալիք ազրպէյճանական ցախագահական ընտրութիւններուն ընթացքը, ինչպէս նաեւ կը ներկայացնէ ցախագահական թեկնածութեան իւրաքանչիւր յաւակնորդի դիրքորոշումը: Ազրպէյճանի ներքին քաղաքական իրադարձութիւններուն վերաբերեալ:

Թէ եւ Ազրպէյճանի նոր նախագահական ընտրութիւններին դեռեւս 3 տարի կայ, սակայն արդէն այսօր կարելի է նշել այն հիմնական անձանց, ովքեր յաւակնուած են երկրի բարձրագոյն պաշտօնին: Ի տարբերութիւն նախորդ ընտրաընթացների, երբ գլխաւոր առաջատարի դէմ հանդէս էր գալիս մէկ, ոչ այնքան հանրայայտ եւ հեղինակաւոր մի ընդդիմադիր, ներկայ ընտրաընթացի մասնակիցները զգալիորէն աւելի շատ կը լինեն: Առաջին համարն, անշուշտ, Հայտար Ալիեւն է: Երկրորդ սահմանադրութիւնը նրան հնարաւորութիւն է տալիս երկիրը ղեկավարել նաեւ երրորդ ժամկէտի ընթացքում: Բանն այն է, որ 1995 թուականին ընդունուած Հիմնական օրէնքը, որը նախ անձին արգելում էր երրորդ անգամ անընդմէջ գրադեցնել երկրի նախագահի պաշտօնը, չի տարածուում նրանց վրայ, ովքեր իշխանութեան են եկել մինչ այդ: Այսինքն, 1993ին Հայտար Ալիեւի արտահերթ ընտրութիւնը հաջարակի մէջ էլ ընդգրկուում: Հետեւաբար, նրա առաջին օրինական ընտրութիւնը համարում է 1998 թուականի ընտրութիւնը, այնպէս որ, նա իրաւունք ունի քուէարկուել նաեւ 2003 թուականին:

Ալիեւին հետեւում է Ազգային Ճակատ Կուսակցութեան նախագահ Ապուլֆազ Էլչիպէյը: Ճիշդ է, պէտք է խոստովանել, որ նրա վարկանիշն ընկնում է: Պատճառը ներկուսակցական հակամարտութիւններն են: «Հայրերի եւ որդիների» հարցը ժողովրդական ձեւատն, բոսնիական, րաժանելի է երկու մասն: «Հին պահակազուեղը», կամ էլ ինչպէս նրանց մտածում են կոչում՝ «պահակազուեղները» Հայտար Ալիեւի միակ մրցակիցը Ապուլֆազ Էլչիպէյին են համարում, մտահանյով այն մասին, որ իր հայրենի Քելքի գիւղում կամուտը պարտի ընթացքում հասարակութեան վերաբերմունքը նրա նկատմամբ խիստ փոխուել է: Մինչ նա իր հայրենիքում կազդուողում էր լեռնային օդով, նրա երիտասարդ տեղակալ Ալի Քերիմովը ստիպուած էր իշխանութիւնների հետ դաժան պայքար մղել յանուն կուսակցութեան պահպանման: Պահպանելու՝ պահպանեց, սակայն միասնութիւնն ապահովել նրան չկարողուց: Երիտասարդ սերունդը այսպէս կոչուած «բարեփոխիչները», իշխանութեան գալու յոյսերը կապում են հինգ Ալի Քերիմովի հետ:

Այլ ընդդիմութեան եւս մէկ թեկնածու կայ՝ «Մուսաւաթ» կուսակցութեան առաջնորդ Իսա Ղամբարը: Նա շատ հանրայայտ քաղաքական գործիչ է, սակայն խիստ աւելի արմատական է, քան ժողովրդական ձեւատնի ներկայացուցիչները: Վարկանիշի առումով նա զգալիորէն գերազանցում է Էլչիպէյին: Ի տարբերութիւն Էլչիպէյի, որը վերջերս երիտասարդութեանը կոչ էր անում «գրաւել Պաքուում Իրանի դեսպանութեան շէնքը», Ղամբարը երբեք էլ կտրուկ յայտարարութիւններ թող չի տալիս իրեն Ռուսաստանի եւ Իրանի նկատմամբ: Աքակցութեան առումով հիմնական շեշտը նա դնում է ծագումով դարաբաղիչների վրայ:

Իր նախագահական յաւակնութիւնները չի թաքցնում նաեւ Ազրպէյճանի Ազգային Անկախութիւն Կուսակցութեան ղեկավար էթիտար Մամետովը: Նրա հիմնական ջանքերը Հայաստանից եկածներն են: Կիրաւորուած «նախագահի ցանձանութիւնից», որն իր իշխանութեան առաջին տարիներին յենուած էր նրանց վրայ, իսկ այնուհետեւ հիմնական եւ կարեւոր պաշտօնների նշանակեց իր հայրենակից նախընտրելիներին, նրանք գրեթե անձաբար անցան Մամետովի ղեկավարած կուսակցութեան շարքերը: Միւս հաւանական թեկնածուն Ռասուլ Կուլիեւն է, նախագահի նախկին համախոհն ու խոր-

հրդարանի նախկին խօսնակը, որն այժմ ապրում է Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Նա ծնունդով Նախիջեանից է եւ հիմնականում էլ յենուած է իր հայրենակիցների վրայ: Նրա անան հետ են կապուած ժողովրդավարական Ազրպէյճան Կուսակցութիւնը եւ վերջերս կազմաւորուած «Ժողովրդավարական Ուղի» շարժումը: Մինչեւ վերջերս նա ամուր ընկերային շուկայն է ֆինանսական հնարաւորութիւններ ունէր: Սակայն ովկիանոսից անդին նրա հարկադիր տարագրութիւնից յետոյ Ալիեւը զգալիորէն թուլացրեց նրա դիրքերը՝ նախկին խօսնակի բարեկամները եւ հարուստ համախոհները ձերբակալուեցին եւ բանտեր նետուեցին:

Ո՞ւմ վրայ կարող է յենուել նա ընտրաընթացի ընթացքում: Վերլուծաբանների կարծիքով Կուլիեւը յոյս ունի իշխող ընտրանքի պահպանողականութիւնը տրամադրուած թեւ հանդէպ: Բարեփոխիչների թեւը գնում է նախագահի որդի Իլհամ Ալիեւի ետեւից: Սակայն հարկ է նշել, որ պահպանողականները այնքան էլ բազմաքանակ չեն, որովհետեւ «համաժողովրդական սէրը» ապահովեն Կուլիեւի հանդէպ: Եւս մէկ, ոչ անարժէք հանգամանք՝ Կուլիեւի դէմ բազմաթիւ մեղադրանքներով քրէական գործ է յարուցուած, ներառեալ նաեւ յատկապէս մեծ չափերի հասնող յափշտակութիւնները, որը նրա մասնակցութիւնը նախագահական ընտրաընթացին ինդուսպէս նրա հանդէպ վարկաբեկման քաղաքականութիւն են վարում: Ի՞նչպէս է նա ապրում Միացեալ Նահանգներում: Ի՞նչ միջոցներով: Որտեղից է նրա միլիոններ հաշուող կարողութիւնը: Ո՞ւմ փողոցով է նա իր համար Մենհեթենում դղեակ գնել: Բոլորին ներշնչում են, որ նա պարզապէս թախանի կաշառակեր է, որին տենչում չի տեսնում բանտը:

Այս առումով նախկին նախագահ Ալազ Մուլիպովը շատ աւելի շահեկան վիճակում է: Նրան առաւելորդուած մեղադրանքները բացայայտորէն քաղաքական ընդմէջ են կնքում, եւ թե՛ Ալիեւը որդրած դառնայ, ապա Մուլիպովը ժողովրդական ձեւատնի բազմաթիւ գործիչներ խոստովանում են, որ միջնորդութեան ձեւերով նպաստել են խոթորուի ողբերգութեանը, որը եւ նախկին նախագահի պատժանկութեան պատճառը դարձաւ: «Ալազ էլ ի՞նչպէս հնարաւոր կը լինէր հեռացնել նրան իշխանութիւնից», ասում են նրանք:

Նրա նկատմամբ հասարակական կարծիքի փոփոխութեան մասին է խօսում նաեւ այն փաստը, որ վերջին երկու տարիների ընթացքում առաջին անգամ են բաւականին բարձր հորիզոնական գրադեցրեց վարկանիշային սանդղակում՝ երրորդը լինելով Ալիեւից ու Մամետովից յետոյ: Նրա կողմնակիցները մայրաքաղաքի ընկերներն են, բնիկ պաշտօնեցիները, Ազրբոնեան թերակազմի, ինչպէս նաեւ՝ Ազրպէյճանի հիւսիսարեւելեան շրջանները: Նախագահի ուժեղ թեկնածու է համարում նաեւ Ալիեւի որդին՝ Իլհամ Ալիեւը: Երեւի թէ իշխանութեան ժառանգականութեան մտքը Ալիեւի մօտ ծագել է սրտի հիւանդութեան մասին տեղեկանալուց անմիջապէս յետոյ, եւ նա յստակ սնկալի է մշակել իր երազանքն իրականացնելու նպատակով:

Արտասահմանեան վերջին մէկ-մէկուկէս տարուան բոլոր շրջադարձներին ընթացքում Իլհամը ուղեկցում է հօրը: Արտասահմանեան ընկերութիւնների հետ քարիզի պայմանագրերը ստորագրում է ոչ թէ քարիզի ընկերութեան նախագահ Նաթիկ Ալիեւը, այլ նրա տեղակալ Իլհամ Ալիեւը: Վերջերս էլ Ուլաշինկ-թիւնում Սփիտակ ծան տիրող հետ հանդիման ժամանակ Իլհամը նստած էր հօր կողքին: Այն կարծիքն է ձեւաւորուել, որ նա է զլխաւորող իշխող վարչախմբի բարեփոխիչ թեւը: Միաժամանակ, մինչ այժմ նա որեւէ ինքնուրույն քայլ չի ձեռնարկել, դուրս չի եկել իր հօր հօր ստուեծեանարկելի, դուրս չի եկել իր հօր հօր ստուեծից: Սակայն դա եւս ժամանակաւոր երեւոյթ է:

ԻՐԱՆԱ ԱՋՆԻԱ

«Հայաստանի Հանրապետութիւն»

Վ. ՊՕՂՈՍԵԱՆ

«Հայաստանի Հանրապետութիւն»

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ՄՈՆԿՈՒՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ ԴՈՒՍԻՈՅ ԵՒ ԶԻԵՒԻ ՆՈՒԱՃՈՒՄԷՆ ԵՏԶ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՀՈՍԱՆՔՆԵՐ ԴԵՊՈՒ ԼԵՀԱՍՏԱՆ

ՀԱՅԵՐԸ ՄԱՍՆԱԿԻՑ՝ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

Լեհաստանի հայկական մեծ գաղթօճախը, կազմաւորուած՝ Անիի անկումէն եւ սելճուք-բոքական եւ հետագային ալ մոնկոլական արշաւանքներէն ետք ծայր առած գաղթականական լայնածաւալ հոսանքներուն ժամանակ, սկզբնական շրջաններուն գլխաւորաբար Կալիցիոյ մէջ կեդրոնացաւ: Հայեր կարեւոր դերակատարութիւն ստանձնեցին Լեհաստանի եւ յատկապէս Կալիցիոյ իշխանութեան սահմաններէն ներս, զարգացուցին առեւտուրը, արհեստները, շէնքուցին գիւղերն ու քաղաքները եւ տեղացի ժողովուրդի կողքին պաշտպանեցին իրենց երկրորդ հայրենիքը օտար բռնամիտներու եւ ներխուժողներու դէմ:



Մալպորթ դղեակը հիւսիսային Լեհաստանի մէջ

հիմնադրատակ կործանեցին եւ գետնին հաւարեցուցին զայն:

Մոնկոլներու անխնայ շարժերէն ու համարած աներաժութիւններէն ճողորմարձ Քիւնի եւ շրջակայքի հայերը խուճապահար փախան դէպի արեւմուտք՝ Կալիցիա, Փոտոլիա, Վոլինիա եւ Լեհաստանի խորքերը:

Այս երկրամասերու իշխանութիւնները սիրով ընդունեցին գաղթականները եւ բնակավայրեր ու պաշտաններ տրամադրեցին անոնց:

ԼԵՀԱՍՏԱՆԻ ԿՐԱՅ ՄՈՆԿՈՒԱԿԱՆ ԱՐՇԱԽԱՆԵՐՆԸ՝ ՀԱՅԵՐԸ ՄԱՍՆԱԿԻՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՒՆԵՐՈՒՆ

Պաթու իրանի հրամանատարութեան տակ գործող մոնկոլական բանակը Քիւնը գրաւելէն եւ ՏՃԻԵՐԸ գետի հովիտին վրայ հակակշիռ հաստատելէ ետք, 1241ի գարնան երկու թեւերու բաժնուելով սկսաւ յառաջանալ դէպի Արեւելեան Եւրոպա: Մէկ թեւը, Պաթու իրանի հրամանատարութեան տակ դարձաւ դէպի հիւսիս-արեւմուտք՝ Լեհաստան, իսկ միւսը, Սուլայան ղեկավարութեան տակ շարժեցաւ դէպի հարաւ-արեւմուտք՝ Հունգարիա:



Լեհական անաղակական ագարակ մը՝ Տվորի շրջանին մէջ

Պաթու իրանի բանակը արագօրէն սկսաւ յառաջանալ դէպի Կալիցիա եւ Լեհաստանի խորքերը, իր համբուն վրայ աներելով շէնքնական վայրերը եւ շարժելով ժողովուրդը: Լեհական տարբեր իշխանութիւններու բանակները, Սիլեզիան ասպետները եւ Տեւտոնեան միաբանութեան ուժերը սկզբնական շրջանին բուն դիմադրութիւն ցոյց տուին, բայց չյաջողեցան երկար դիմադրել եւ բռնեցին նահանջի ճամբան:

Այս ժամանակ բնական թիւով հայութիւն կար Կալիցիոյ իշխանութեան սահմաններէն ներս, որ կենաց մահու վտանգիւմ առջեւ կը գտնուէր. ամէնէն անելի վտանգուած էր Կամենեցի հայութիւնը, որովհետեւ ՏՃԻԵՐԸ գետի աւազանին մէջ, Սմոթրիչ գետի ափին գտնուող քաղաքը ամէնէն անելի մօտ էր պատերազմի նակատներուն:

Այս պայմաններուն տակ Խրիմի Կաֆա քաղաքէն (ուր մեծ թիւով հայութիւն կար) քառասուն հազար հոգիէ բաղկացած հայկական զօրամաս մը օգնութեան հասաւ կամենեցի՝ պաշտպանելու համար քաղաքին հայութիւնը: Հայկական այս զօրագունը մեծ դեր ունեցաւ շրջանի ինքնապաշտպանութեան կոնկրետներուն մէջ:

Լեհական բանակները, արևմտեան կողմէն եւ տեղափոխութեան ջանքերով նակատարարուին, իսկ Սիլեզիական եւ Տեւտոնեան ուժերը՝ Լեհական մարտիկներու: Այս իրավիճակին առջեւ Սիլեզիոյ երկու դուքսերը միացուցին իրենց ուժերը՝ շարունակելու համար դիմադրութիւնը: Նոյն տարին իսկ՝ 1241ին,

մոնկոլներ յառաջացան մինչեւ Լեհաստանի մայրաքաղաքը՝ Քրաքով, շարժեցան դէպի երկրին խորքերը, մտան Սիլեզիա եւ հասան մինչեւ գերմանական Պրեսլա քաղաքին սահմանները:

Այս յաղթանակներէն ետք մոնկոլներ, թալանելէ ու կոտորուելէ ետք շրջանին հարստութիւնները, յաջորդ տարին՝ 1242ին քաշուեցան կարգ մը երկրամասեր եւ վերադարձան Մոնկոլիա, նոր մեծ իրան մը ընտրելու համար, որովհետեւ Հոկաթայ իրան մահացաւ 1241ին, իսկ Չակաթայ իրան՝ 1242ին:

Մոնկոլները թեւեւ մասամբ հեռացան, բայց Փոքր Լեհաստանէն արեւելք տարածուող Կարմիր Ռուբինիան իրենց նուաճութեան տակ պահեցին, որ իրեն իարխի ծառայեց անոնց՝ Լեհաստանի վրայ հետագային կողոպտչական արշաւանքներ կազմակերպելու համար: Միաժամանակ Մեծ Լեհաստան եւ յատկապէս Մազովիա հեթանոս լիբուսացիներու եւ այլ ցեղերու տեւական յարակամներուն ենթակայ մնացին: Այս պայմաններուն տակ մագովիացիք ստիպուած Պուկ գետի ափերը, Տրոնիցիայի շրջակայքը Կարմիր Ռուբինիոյ շրջեցան, իսկ Լուպուսի շրջանը եւ Ստեր գետի ափերը՝ Պրանտեմուրկի Ասքանիաններուն:

Լեհաստանի տարածութեան օգտուելով՝ Պոհեմիոյ Ուեյցեպուս Բ. թագաւոր (1278 - 1305) իրեն ենթարկեց Սիլեզիոյ երկու գրաւութիւնները, իսկ Քրաքովի գրաւութեան վրայ ալ գերակայութիւն հաստատեց:

Հակառակ Լեհաստանի դիմագրաւած այս բոլոր տակնուվրայութիւններուն ու դժուարութիւններուն, Քիւնեան Ռուսիայէն եւ յարակից երկրամասերէն դէպի լեհական իշխանութիւններ հայերու գաղթականական հոսանքները կը շարունակուէին, որովհետեւ Լեհաստան, բազմամիջ իր շրջակայ երկրներուն, անելի ապահով էր, հոն չկար մոնկոլական իշխանութիւն: Ընկերային եւ տնտեսական պայմանները անելի նպաստաւոր էին, եւ վերջապէս, Լեհաստան միատարր քրիստոնեայ բնակչութեամբ երկիր էր:

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ԼԵՀԱՍՏԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՒՆԵՐՈՒՆ

Մոնկոլական աներիչ արշաւանքներէն եւ անկման ու տկարացման շրջանէ մը ետք լեհ իշխան Փրզեմիսլ 1279ին վերամիադրեց Մեծ Լեհաստանը, անոր կազմին մէջ առնելով նաեւ Կիւեզլոյի շրջանը: 1294ին ան իր իշխանութեան կցեց Արեւելեան Փոմերանիան: Այս յաղթանակներէն ետք, Կիւեզլոյի արքայի սկզբնական 1295ին զայն թագաւոր օժեց: Փրզեմիսլ սկսանուեցաւ 1296ին, Պրանտեմուրկի մարքիզին դրողովով:

Այս ժամանակ Պոհեմիոյ Ուեյցեպուս (Վացլաւ) Բ. թագաւոր, որ արդէն լեհական կարգ մը հողեր իրեն ենթարկած էր, 1300ին ինքզինք նաեւ Լեհաստանի թագաւոր հռչակեց եւ Լեհաստանի հողերուն մեծ մասը իր իշխանութեան ենթարկեց: Այնուհետեւ ան Պոհեմիան եւ Լեհաստանը Հռոմեական Սրբազան Կայսրութեան անդամ երկրամասեր հռչակեց: Ան մահացաւ 1305ին եւ անոր յաջորդեց զակալը՝ Ուեյցեպուս Գ., որ սակայն յաջորդ տարին իսկ սպաննուեցաւ, որմէ ետք Լեհաստանի եւ Պոհեմիոյ գահերը թափուր մնացին:

Այս ժամանակաշրջանին Քիւնէն եւ շրջակայ երկրներէն լեհական հողեր հասնող հայեր գլխաւորաբար Լեհաստանի արեւելեան իշխանութիւններուն մէջ բնակութիւն հաստատեցին, եւ այս ժամանակ ալ Փոտոլիոյ մէջ փոքրիկ գաղութ մը կազմաւորուեցաւ:

Փոտոլիա Կալիցիայէն արեւելք տարածուող երկրամաս մըն է (ներկայ Ուքրաինոյ մէջ), որմէ արեւելք եւ հիւսիս - արեւելք կը գտնուէ Քիւնը: Անիկա կ'ընդգրկէ Անդրոնիքներէն անտառատափաստանային բարձրութիւններ (մինչեւ 362 մետր բարձրութեամբ), որոնք անտառներով ու թփուտներով ծածկուած են, որոնք հարուստ են վայրի կենդանիներով՝ այծեամ,



Վոլիցիա՝ անտառապատ երկրամաս մը

գալլ, աղուէս, կղաքիս, ջրաքիս, ջրամոյր եւ այլն: Հոնկէ կը հոսին Սմոթրիչ, Պուկ եւ Տեւտոն գետերը: Շրջանը շաքարի նակնդեղի ու հացահատիկի արտադրութեան Հոնմարան է:

Փոտոլիա հասնող հայերը շրջանին արեւմտեան կողմը, Կալիցիոյ սահմանամերձ շրջանի մը մէջ, Սմոթրիչ գետի ափին, Սմոթրիչ գիւղին մօտ, Կամենեցեան հիւսիս տարածուող դաշտավայրերուն մէջ բնակութիւն հաստատեցին:

Հայեր ալ շրջանը ընտրեցին իբրեւ բնակավայր, որովհետեւ իշխան Լեւ Կանելուիչ 1280ին այդ հողերը հայերուն նուիրեց իրենց մատուցած ծառայութեան համար: Հայեր հոն Մեծ Հայեր եւ Փոքր Հայեր գիւղերը կառուցեցին եւ մնայուն բնակութեան հիմեր դրին:

Ցամաքային իրիստ կլիմայով եւ երկարատեւ ձմեռառատ ծմբոններով յատկանշուող այդ երկրամասերուն մէջ, այս շրջանին կլիման անելի նպաստաւոր, եւ հողերն ալ ջրառատ ըլլալով՝ երկարագործական եւ անանուապահական լայն կարելիութիւններ կ'ընձեռեցին: Հայկական այդ գիւղերը նաեւ Մոլտաւիայէն Լեհաստան եւ լեհական ու շրջակայ այլ իշխանութիւններ իրար կապող առեւտրական ուղիի վրայ կը գտնուէին: Այս բոլորը նպաստեցին, որ անոնք արագօրէն զարգանան ու բարգաւաճեն:

Սակայն հայեր երկար չմնացին այդ գիւղերուն մէջ եւ հետագային մեծ մասամբ Կամենեցեց քաղաքը փոխադրուեցան, ուր արդէն հայկական ստուար գաղութ մը կար:

Մօտաւորապէս այս ժամանակաշրջանին բնական թիւով հայեր հաստատուեցան նաեւ Կալիցիոյ իշխանութեան սահմաններէն ներս գտնուող Շազլովից գիւղին մէջ, ուր 1250ական տարիներուն կենդանի կառուցեցին: Շազլովիցի հայերը գլխաւորաբար առեւտուրով, արհեստներով եւ անանուապահութեամբ զբաղեցան եւ բարեկեցիկ վիճակի հասան. նշանաւոր դարձան յատկապէս այս գիւղին կաշեգործ հայերը: Շազլովիցի հայ համայնքը հետզհետեւ անելի ստուարացաւ նոր հասնող գաղթականներով: Հայերը սկիզբէն իսկ առանձին թաղամասի մէջ հաստատուեցան, բայց յետոյ անոնց թիւը բազմացաւ եւ գիւղը մեծ մասամբ հայկական դիմադիւ ստացաւ ու Հայաքաղաք կոչուեցաւ: Հայեր հետագային գիւղին մօտակայքը վանք կառուցեցին: Շազլովիցի հայերուն ազարակներն ու դասակարգները գիւղէն դուրս եւ մինչեւ հեռաւոր անձայրածիր դաշտերուն մէջ տարածուած էին:



Լուցկի դղեակին մուտքը, կառուցուած՝ 19-17 դարերուն

Մոնկոլական աներիչ արշաւանքներէն եւ անկման ու տկարացման շրջանէ մը ետք լեհ իշխան Փրզեմիսլ 1279ին վերամիադրեց Մեծ Լեհաստանը, անոր կազմին մէջ առնելով նաեւ Կիւեզլոյի շրջանը: 1294ին ան իր իշխանութեան կցեց Արեւելեան Փոմերանիան: Այս յաղթանակներէն ետք, Կիւեզլոյի արքայի սկզբնական 1295ին զայն թագաւոր օժեց: Փրզեմիսլ սկսանուեցաւ 1296ին, Պրանտեմուրկի մարքիզին դրողովով:

Այս ժամանակ Պոհեմիոյ Ուեյցեպուս (Վացլաւ) Բ. թագաւոր, որ արդէն լեհական կարգ մը հողեր իրեն ենթարկած էր, 1300ին ինքզինք նաեւ Լեհաստանի թագաւոր հռչակեց եւ Լեհաստանի հողերուն մեծ մասը իր իշխանութեան ենթարկեց: Այնուհետեւ ան Պոհեմիան եւ Լեհաստանը Հռոմեական Սրբազան Կայսրութեան անդամ երկրամասեր հռչակեց: Ան մահացաւ 1305ին եւ անոր յաջորդեց զակալը՝ Ուեյցեպուս Գ., որ սակայն յաջորդ տարին իսկ սպաննուեցաւ, որմէ ետք Լեհաստանի եւ Պոհեմիոյ գահերը թափուր մնացին:

Այս ժամանակաշրջանին Քիւնէն եւ շրջակայ երկրներէն լեհական հողեր հասնող հայեր գլխաւորաբար Լեհաստանի արեւելեան իշխանութիւններուն մէջ բնակութիւն հաստատեցին, եւ այս ժամանակ ալ Փոտոլիոյ մէջ փոքրիկ գաղութ մը կազմաւորուեցաւ:

Փոտոլիա Կալիցիայէն արեւելք տարածուող երկրամաս մըն է (ներկայ Ուքրաինոյ մէջ), որմէ արեւելք եւ հիւսիս - արեւելք կը գտնուէ Քիւնը: Անիկա կ'ընդգրկէ Անդրոնիքներէն անտառատափաստանային բարձրութիւններ (մինչեւ 362 մետր բարձրութեամբ), որոնք անտառներով ու թփուտներով ծածկուած են, որոնք հարուստ են վայրի կենդանիներով՝ այծեամ,

ՄՈՆԿՈՒՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ ԶԻԵՒԻՆԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՑՆԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՆ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Մոնկոլական աներիչ արշաւանքներուն ժամանակ, յատկապէս 1230ական տարիներուն, երբ Հայաստան անխնայ աներաժութիւններու թատերաբեմ դարձած էր, մեծ թիւով հայեր ձգեցին իրենց տունն ու տեղը եւ փախան դէպի արեւմուտք, եւ անոնցմէ շատեր հասան Կալիցիոյ սահմանները, ուր գաղթականական նախորդ հոսանքներու ժամանակներէն արդէն հայեր հաստատուած էին: Կալիցիոյ իշխան Կանելուի Ռոմանովիչ սիրով ընդունեց հայերը՝ անոնց միջոցով շէնքնելու ու զարգացնելու համար երկիրը եւ զանոնք իբրեւ նեցուկ գործածելու իր ներքին ու արտաքին բռնամիտներուն դէմ:

Կալիցիոյ յարակից, անկէ արեւելք գտնուող Քիւնեան Ռուսիոյ մէջ հայկական հին եւ ըստուար գաղութ մը կար. անոնք հոն հաստատուած էին ժ.Ա. դարու սկիզբէն, իսկ 1062ին տասնեակ հազարաւոր հայեր Անիէն եւ շրջակայքէն գաղթած էին հոն: Քիւնի հայերը օգնած էին Պոլեսլա Քաջի՝ լեհ աւատապետներու դէմ անոր միջոցով տեղափոխուելու. անոնք նաեւ 1060ական տարիներուն պաշտպանած էին Քիւնեան Ռուսիան դիպչողներուն ներխուժումներուն դէմ:

Մոնկոլներ, ձեռնկի իրանի եւ անոր զաւակներուն առաջնորդութեամբ, ժ.Գ. դարու սկիզբէն մինչեւ 1230ական տարիները Չինաստանը, Կեդրոնական Ասիան, հարաւային Սիպրիան, Իրանը, Հայաստանը եւ Անդրկովկասը նուաճելէ, աներելէ, կողոպտելու եւ ամէնուրեք զանգուածային շարժեր կազմակերպելէ ետք, շարժեցան դէպի ռուսական տափաստաններ եւ Արեւելեան Եւրոպա: Անոնք առաջին անգամ ձեռնկի իրանի ժամանակ, 1222ին արշաւած էին դէպի ռուսական տափաստաններ:

Արդարեւ, ձեռնկի իրանի զաւակն եւ յաջորդին՝ Հոկաթայ իրանի մեծ եղբօր՝ Եւնի իրանի զաւակին՝ Պաթու իրանի հրամանատարութեան տակ մոնկոլական 150 հազարանոց բանակները 1235 - 1236ին շարժեցան դէպի ռուսական տափաստաններ, եւ իրենց համբուն վրայ աներելով ու գետնին հաւասարեցնելով ամէն շէնքն ու գիւղ եւ անոնց բնակիչներն ալ զանգուածաբար սուրի քաշելով՝ մտան Տոն եւ Վոլկա գետերու հովիտները եւ նուաճեցին հոն բնակող պոլսկարները: 1237ին անոնք յարձակեցան պաշտպանելու, զըփչաղներուն եւ միջին Վոլկայի ժողովուրդներուն վրայ, եւ նուաճելով զանոնք՝ ամէնուրեք «մահուան սուն» կատարեցին. 1237 - 1238 տարիներուն անոնք Գալիցիոյ Ռիպանը, Վլատիմիրը, Մուկուլեան, Պուկը, եւ Նովկորոտի գրաւումով ամբողջացուցին Ռուսիոյ նուաճումը: 1239ին անոնք հասան Քիւնեան Ռուսիոյ սահմանները:

Մոնկոլներ, իրենց ուժերը վերապահելու եւ բարձրացնելու ետք, 1240ին մեծ ուժերով յարձակեցան Քիւնի վրայ: Քիւն, ՏՃԻԵՐԸ գետի ափին, շրջանին ամէնէն զարգացած, գեղեցիկ, շէնքն ու բարգաւաճ քաղաքն էր, եւ արեւելեան սլաւոնական ժողովուրդներուն հոգեւոր, մշակութային ու քաղաքական գլխաւոր կեդրոնը: Քիւնի իշխաններն ու մետրոպոլիտները մեծ հեղինակութիւն ունէին սլաւոնական ժողովուրդներուն մէջ, եւ արտաքին զօրաւոր կայսրութեան երկրպագու տարբեր իշխանութիւններուն հետ:

Քիւն թեւեւ պաշտպանութեան ամբողջութեամբ եւ բնական ալ ուժ ունէր, բայց չյաջողեցաւ երկար դիմադրել. մոնկոլներ արագ եւ վրձնական յարձակումներով գրաւեցին քաղաքը, անխնայ շարժեցին ժողովուրդը, թալանեցին քաղաքին հարստութիւնները եւ այնուհետեւ ալ

